Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Պ-398-26.11.2013,31.01.2014-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 35-րդ հոդվածի երրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Սույն օրենքով սահմանված կարգով պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգման գծով արտոնություն ունեցող վճարողի կողմից պետական տուրքի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը, ինչպես նաեւ սույն օրենքով սահմանված տարեկան պետական տուրքերի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը չկատարելու դեպքում բյուջե չվճարված պետական տուրքի գումարները ենթակա են վճարողից բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.15 տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ միասին: Սույն պարբերությամբ նախատեսված տույժը կիրառվում է ժամանակին չմուծված պետական տուրքի գումարի նկատմամբ՝ դրա վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը վճարման ժամկետին հաջորդող 365 օրը լրացած պետական տուրքի չվճարված գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից դադարում է:

Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը վճարման ժամկետին հաջորդող 365 օրը չլրացած պետական տուրքի չվճարված գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից հաշվարկվում է ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,15 տոկոսի չափով մինչեւ վճարման ժամկետին հաջորդող 365 օրը լրանալը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

Առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-397-26.11.2013,31.01.2014-ՏՀ-010/1, Հեղինակ՝ Միքայել Մելքումյան) վերաբերյալ առաջարկությունների

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկությունի վերաբերյալ հանձնաժողովի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Փոփոխված (լրացված) հոդվածի տեսքը՝ ընդունված առաջարկությամբ
	<< Կառավարություն	Հոդված 2	Առաջարկվում է անցումային դրույթները վերաձևակերպել հետևյալ բովանդակությամբ. « Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից: Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը վճարման ժամկետին հաջորդող 365 օրը լրացած պետական տուրքի չվճարված գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից դադարում է: Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը վճարման ժամկետին հաջորդող 365 օրը չլրացած պետական տուրքի չվճարված գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից հաշվարկվում է ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,15 տոկոսի չափով մինչեւ վճարման ժամկետին հաջորդող 365 օրը լրանալը: »	Ընդունվել է:	***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից: Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը վճարման ժամկետին հաջորդող 365 օրը լրացած պետական տուրքի չվճարված գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից դադարում է: Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը վճարման ժամկետին հաջորդող 365 օրը չլրացած պետական տուրքի չվճարված գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից հաշվարկվում է ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,15 տոկոսի չափով մինչեւ վճարման ժամկետին հաջորդող 365 օրը լրանալը: